

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 45

ՄԱՅԻՍ 19/1 ՅՈՒՆԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի : Մայիս 19/1 Յունիս : Թիւ 45

ԶՔՆԱՂ ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ս. ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՅԻՈՅ

ԶՈՐ ԽՕՍԵՑԱԻ Ի ՓԱՌՍ ԱՍԵՆԱՍՈՒՐԻ ՀՈԳԻՈՅՆ

(Շարունակութիւն)

Այն ատեն Միածինն առաւ մխիթարիչը Սաղիմի վրայ ցողելու համար, ու ձեան նման իջեցուց հոն գումարուած թագաւորներուն վրայ՝ Սաղմոսերգուի գուշակութեանց համաձայն : Եւ Հոգին եկաւ բնակեցաւ անոնց սրտերուն մէջ, ու շլացուցիչ կերպիւ լուսաւորեց Քրիստոսի ծովածաւալ սիրոյն տարածութիւնը : Եւ որովհետեւ ձրի շնորհ մըն էր ան Քրիստոսի մահուան փոխան, ուստի հաւասարապէս կը տարածուի արժանաւորներու և անարժաններու ալ վրայ : Այս պատճառաւ՝ ահա, Պետրոսի մէկ բարբառէն երեք հազար հոգի կ'աշակերտին այսօր : Որով խիստ իրաւամբ վկայեց Բանը թէ յոյժ սքանչելի է այս մեծ օրուն շնորհը :

Զի, ինչպէս սերմանելէն աւելի հաճելի է ժողովելը, նոյնպէս ալ Քրիստոսի խորհրդոյն բոլոր սերմանց պատուը այս օրուան մէջ կը կթուի: Այս նոյն ինքն սուրբ Հոգին է՝ որու մասին վկայեց թէ մեզ պիտի ուսուցանէ և յիշեցնէ մեզի ինչ որ ինք բնած էր: Այս քաղցր ցօղը զուարթացուց բոյսերը Քրիստոսի խօսքերուն, և օրհնելով պատկեց իր գործոց տնօրինական տարին: Այս իսկ պատճառաւ եկեղեցին կ'աղաղակէ. Չմեռը անցաւ, մեր այգիները ծաղկեցին ու հոս տուին: Այս առաւօտ երկնաւոր Հայրը երկիր նայեցաւ. խմցուց անոր սուրբ Հոգւոյն յորդառատ գեւեղէն, և շատ մը տունկերու արմատներէն առաքելութեան բազմազան բոյսեր փթթեցուց ու ծաղկել տուաւ. ինչպէս կ'ըսէ մարգարէն: Ահա ձիր մը՝ որ չի փոխուիր, և պարգեւ մը՝ որ չունի իրեն հաւասար կշիռ մը: Ահա ընծայ մը՝ որու իսկական ճոխութիւնը չի կրնար ըմբռնել միայնքը: Ահա այնպիսի առատ ողորմութիւն մը՝ որու հետ բաղդատելով աշխարհի բոլոր հարստութիւնը, դեռ սաի շատ փոքր կը մնայ. և միայն իրութիւն մը՝ որու չի կրնար հաւասարիլ մարմնական ո՛ր և է ուրախութիւն: Զի, ո՞վ երբէք կրցաւ աշխարհի տիրելով հանդերձ, անապակաւ նստիլուն սաանալ. և կամ ո՞ր մէկ թագաւոր յաջողեցաւ մահը կենաց փոխելու. կամ ի՞նչ մարմնաւոր երջանկութիւն՝ կրցաւ յաւիտեական կենաց տիրանալ երբէք: Իսկ ան իջնելով այսօր առաքելոց դասուն վրայ՝ զօրացուց անոնց բազուկները որ ընդհանուր տիրեցերքի բաշխեն զայն: Ինչու որ, անոնք լցուելով նոյն Հոգւով, իրենց ստուերովը հրեանդները բժշկեցին, թաշկինակով ցաւերը փարատեցին, ձեռքով մեռելները յարուցին, կաղերք քաղցուցին, կոյրերը լուսաւորեցին, աւելի հոգեկան՝ քան մարմնաւոր աչքերը գէպի երկինք հրաւիրեցին, ու անվախճան փառաց ժողովագործ ըրին զմարդիկ: Եւ ահա յետոյ յայտնի եղաւ՝ թէ այդ երկնային շնորհաց երկրաւորներէն և ոչ մէկը արժանի գտնուեցաւ: Զի, բանաւորները չկրցան օգտուիլ այն հոգիէն. մինչ մարդոցմէ շատ աւելի անշունչ տարրերը ընդունակ գտնուելով անկէ զօրացան: Եւ իրօք, ան իջած պահուն, է՛ն աւաջ սքանչելապէս լեցուց տունը, և յետոյ գուրգուրանօք հանգչեցաւ հոն նստողներուն վրայ. ինչպէս կ'ըսէ. «Ու երբ Պէնտէկոստէի օրերը հասան, անոնք ամէնը մէկ հաւաքուած էին: Եւ ահա յեղակարծ հնչիւն մը եկաւ երկինքէն նման սասակաշունչ հովի մը, ու լեցուց ամբողջ տունը՝ ուր անոնք նստած էին: Ու հրեղէն լեզուներ մը երեւցան անոնց՝ որոնք իջան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ: Եւ ամէնքն ալ Ս. Հոգւով լեցուեցան և սկսան այլեւայլ լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց բարբառել կու տար: Միասին ամէնքը հաւաքուած էին կ'ըսէ, իմացնելու համար թէ ոչ միայն տառնեղիւքը, այլ Աստուածածին Կոյսն ալ անոնց հետ էր՝ այն կիներով միասին որոնք Յիսուսի կը սպասաւորէին Գալիլիոյ մէջ՝ ու ականատես ալ եղած էին յարութեանը: Եւ այս ամէնուն հետ եօթանասուն աշակերտաց գունդը ի-

րենց բոլոր ծանօթներով։ Արդ, Հոգին սուրբ անոնց վրայ եկաւ. ինչպէս կանխաւ խոստացած էր ըսելով. Ահա ես պիտի դրկեմ ձեր վրայ իմ Հօրս աւետիսը, ու դուք այդ քաղաքին Երուսաղէմի մէջ կեցէք՝ մինչեւ որ վերէն զօրութիւն զգենուք։ Իսկ որոտագին թնդիւնովն ալ հեղման յորդութիւնը ցոյց կու տար։ Դարձեալ, որովհետեւ նոյն Հոգին էր որ ջուերերուն վրայ կը շրջէր արարչագործութեան սկիզբները, ուստի և իր իմանալի զօրութեան հետ միասին զգալի հրեղէն ձեւով լեցուց սուներ մեծ ապշանք պատճառելով յիմարներուն։ Եւ յետոյ այն հրեղէն գունդը լեզուներու բաժնուեցաւ, և հանգչեցաւ անոնցմէ իւրաքանչիւրին վրայ, որով նշանակ մը կ'ըլլար անոնց տրուած զանազան լեզուներ խօսելու շնորհաց պարգեւին։ Այս պատճառաւ ահա, երբ մարմնեղէն լեզուներու ձեւով այն հրեղէն լեզուները հանգչեցան անոնց վրայ, մէջէն գերբնական լոյսով մը անոնց միաքերը բացուելով՝ սկսան տարբեր տարբեր լեզուներով բարբառել։ Ինչպէս կ'ըսէ. Այլեայլ լեզուներ, կը խօսէին՝ ինչպէս որ Հոգին անոնց բարբառել կու տար։ Ոչ թէ, լեզուախօսութեան շնորհը ամէնէն նախամեծար շնորհը ըլլալուն համար, այլ որովհետեւ իրենց ընդունած շնորհները հռչակելու համար կանխիկ ուրիշ աւելի յարմար նշան մը չունէին։ Իսկ այն իրենց տարբեր տարբեր լեզուներ խօսելէն՝ քաղաքին ամբողջ բազմութիւնը ապշահար հոն զիմեց, ինչպէս կ'ըսէ. Ամբողջ բազմութիւնը եկաւ խոնկեցաւ, ամէնքն ալ զարմացած ապշահար կը մնային։ Իսկ ուրիշներ այս սքանչելի այլափոխումը ծաղր ընելով կ'ըսէին, թէ գիտով են։ Արդ, ամէնուն համար ալ այսպէս ըլլալով սոյն շնորհը, Հոգին անոնց վրայ իջած պահուն լեզուի շնորհէն զատ մէկէն չաղճեց Քրիստոսի ամբողջ խոստումը։ Զի, ոն չըսաւ թէ Հոգւոյն շնորհիւ լեզուներ պիտի խօսիք, այլ՝ թէ պիտի հմուտ ընէ ձեզ, և տողորէ ձեր մտքին մէջ ինչ որ ևս ըսի ձեզի։ Եթէ ուրեմն այս շնորհը ընդունած ըլլային անոնք սկիզբէն, այն օտեն իրենց այլատարազ խօսուընտուքներով ապշահար բազմութիւնը խռնել չէին տար իրենց շուրջը։ Ասոր համար ամէնիմաստը նախ զարմանալի դէպքով մը չփոթեց զանոնք խաղի անձնատուր մանուկներու նման։ Զի, անոնք որ դեռ երէկ ու այսօր գռեհիկ ու չինական Գալիլեացիներ էին, ահա հեղէն իմաստուններուն նման ճարտարօրէն կը խօսին, և ուրիշներ բոլորովին օտար եղող պարթեալական լեզուով կը պատասխանեն անոնց։ Պետրոս որ Կափառնաուտ մնած էր, ահա կը լսենք որ Հռովմայեցոց լեզուով պերճօրէն կը խօսի. և Փիլիպպոս՝ որ Փաղիլիոյ Բեթսայիդա քաղաքէն էր, Արաբերէն լեզուով կը բարբառի։ Յովնանէն՝ որ Նազարէթի մէջ մնած էր, ինչպէս Կիլիկիան լեզուով հարցումներ կ'ուղղէ մեզի. միւս կողմէն ալ Թովմաս Եթովպական լեզուով կը յիշատակէ մարգարէներու խօսքերը։ Կը տեսնէ՞ք հոպա սա տիմար Թադէոսը՝ թէ ինչպիսի պերճօրէն կը յայտնէ իր գաղափարը Հայերէն լեզուով. և սա դեռ պատանի Բարդուղիմէոսը՝ որ

Մարաստանի մէջ ծնողի մը պէս անոնց լեզուն կ'արտաբերէ։ Ո՛վ հրաշք մենք որ տարբեր գաւառներու մէջ ծնելով, մեծ ճիգով կրցանք վարժիլ անոնց լեզուներուն, մինչ ասոնք՝ որ բնաւ չէին տեսած այն քաղաքներն ու այժմ անաշխատ անոնց լեզուներով կը խօսին։ Մեծ հրաշք իրաւ որ, և թէ ի՞նչ լանի պիտի յանգի այն չենք կրնար գուշակել։

Այն ատեն ոտքի ելնելով Պետրոս՝ տասնութէկ առաքելոց հետ միասին, ձայնը բարձրացուց և սկսաւ լուծել տարակուսանքը։ Դուք, ո՛վ Հրէաստանցիներ, և դուք՝ որ Երուսաղէմ կը բնակիք, լաւ ուշադիր եղէք ու միտ դրէք իմ խօսքերուն։ Այս արքեպիսկոպոսն է յի գար, քանի որ դեռ ժամը երեքն է, այլ բերկրութեան բաժակ մըն է և գրաւական՝ անապականութեան, մարգարէներէն գուշակուած և որ խորհուրդը այսօր կատարուած է։ Ո՛վ օրէնսւոյցներ ու դուք՝ մարգարէներու աշակերտներ, այս՝ Յովէլի ըսածն է — զոր դուք կը կարգաւ միշտ — որ կատարուեցաւ։ Զի, ահա յետին օրերուն, թափեց Աստուած իր հոգիէն ամէն տարիքի մարդոց վրայ ու մենք կը մարգարէանանք։ Այն Յիսուս Նազովրեցին՝ որ նշաններով ու հրաշքներով երեւցաւ ձեր քով, ու անիրաւ տեղը խաչուեցաւ, երկինք ելաւ ու նստաւ Աստուծոյ աջ դին, ահա Սուրբ Հոգւոյն այս պարգևներն ընդունելով Հօրմէն, սրբուեց մեր վրայ։ Ան՝ փառքով երկինք համբարձած պահուն ուխտեց մեզի, ու երբ երկինք մտնելով հաւատարմի նստաւ Հօր ու Հոգւոյն, այս բանն ըսաւ։ Ահա կատարեցի ես ձեր ինծի վստահած գործը երկրի վրայ։ Իմ Հօրս անունը փառաւորեցի մարդկանց քով։ Կիանալիօրէն սրբեցի՝ մեր աստուածութեան բնութեան հետ միացնելով, մեր պատկերակիցը՝ որ ապականած էր չարին մախանքէն։ Ես մահանալով ողորմելի ու տառապեալ մարդկային ազգին համար, զանոնք ազատեցի՝ անէծքէն, և հիմա նոյն այն մարմնով հոս գալով՝ երկրպագութիւն կ'ընդունելով երկնաւորներէն։ Ասկից վերջ քու գործելու ժամը է, ո՛վ իմ փառակից Հոգիս։ պէտք է որ քու մարդասիրութիւնդ ալ ցոյց տաս երկրի վրայ։ Ասկից վերջ քեզի կը վստահիմ որ մեր աստուածութեան անունը յարգելի ընծայես մարդկանց քով։ Իմ Հայրս ներեց ու թողուց այն պարտքերն՝ որոնք արգելք չեն քեզ համար անոնց վրայ թափուելու, ու իմ մարմինս զոհուելով, ան զիս իբր գրաւական ընդունեց մարդիկներէն, ու քեզ տանոց կու տայ իբր խաղաղութիւն։ Օ՛ն, սիրով իջիր այժմ անոնց քով դուն ո՛վ սիրոյ աղբիւր, ու մխիթարէ ամէն անոնք՝ որ այն պանդըխտութեան մէջ նստեալ ու անցաւոր կեանքով կը տառապին։ Դարձուր զանոնք այն ունայնութիւններէն, որոնցմով զո՛ւր տեղ թշնամին կը խռովէ զանոնք՝ վե՛ր, այս բազմաթիւ օթեմաններուն նայելու՝ զորս անոնց համար պատրաստեցինք։ Առատ իմաստութիւն մը բաշխէ անոնց, որպէս զի եղեռնագործը չմոլորեցնէ զանոնք։ Ես անոնց կարեաց մասնակցեցայ, ու փորձով ճանչցայ՝ թէ տկար ու դիւրաբեկ է անոնց բնու-

Թիւնը, ուստի կ'աղաչեմ, մի' բաժնուիր անոնց քովէն ու զօրացո՛ւր զանոնք ամէն փորձանքներու դէմ: Ետ մղէ մարմնոյ կամքերն ու զօրացուր մտաց կամքերը: Քեզի՛ կու սամ, քեզի՛ կը յանձնեմ զանոնք, ես քեզ անոնց խոստացայ եւ հիմակ ալ քու մէջդ կ'ամրափակեմ ամէնքը. որպէս զի զո՛ւր տեղ թափուած չլլայ իմ արիւնս զոր իրենց համար նուիրեցի: Զարդարէ զանոնք, ո՛վ իմ համագոյակից Հոգիս, շնորհքներով բժշկութեան, մարդտրեւութեան, վերին բաները խորհելու, ստորինները առնելու: Ես թէպէտ շատ անգամ խօսած եմ երկնից արքայութեան վրայով, բայց սիրով մտիկ չէին ընել անոնց, Բայց երբ բժշկութիւններ կ'ընէի, մեռելներ կը յարուցանէի, կաղեր կը քալեցնէի, կոյրեր կը լուսաւորէի, ամէնուն ալ սէրը կ'ածէր ու կ'առատանար իմ վրայ: Հոգւոց անունդ եղող իմաստութեան խօսքեր կը խօսէի ու մէկ մը չէր զգաստանար. բայց երբ զանոնք կշտայնելու համար առատօրէն տուի մարմնոյ հացը, աշխտի զիս սիրել սկսան՝ որ կ'ուզէին անգամ զիս յափշտակել թագաւոր ընելու համար: Այսպէս է մարդկային մտաւորական կացութիւնը՝ զոր ես փորձեցի. անոնք անկարող են խորհելու իրենց խոստացուած վերին բարեաց վրայով: Անոնք չեն գիտեր երկնաւոր այս փառքը, այլ միշտ երկրի վրայ կաշկանդուած են, եւ յոյսով ունին այս ճշմարտութիւնը ինչ որ անոնց քով յանձնարարելի սեպուած է: Ուստի, նախ դուն նշաններով ու սքանչելիքներով ապացուր անոնց տղայամասութիւնը, եւ անոնց երկրայութիւնն ալ բժշկութեան շնորհիւ ուղղէ դէպ ի հաստատուն հաւատք: Մի՛ մերժեր քու առատութեան շնորհներդ բաշխելու մեր աստուածութեան փառաց ու պատուոյն համար: Ետտ է՝ որ ինչպէս երկինք, նոյնպէս երկիրն ալ լեցուի մեր աստուածութեան փառքով. եւ ինչպէս հրեշտակները՝ նոյնպէս մարդիկներն ալ օրհնարանիչ ունենանք մեր անուներուն: Զարմանալու բան մը չկայ, թէ որ շատ մը հրաշքներով դէպ ի մեզ նուաճենք մեր մոլորած արարածները: Արդ, իջի՛ր կ'աղաչեմ, իջի՛ր, զի անոնք շուարուն վիճակ մ'ունին: Քիչ մը ասեն ես տնօրինական մահով բաժնուեցայ անոնցմէ, եւ ահա երկունքի ցաւի նման վշտով համակուեցան իմ աշակերտներս, այնպէս փութացնելով յարութիւնը միսիթարեցի զանոնք: Տասնութէկներէն մին հոն չէր, ուստի տասնին վկայութենէն իսկ չէր ուզեր հաւատալ յարութիւն առնելու, մինչեւ որ կրկին անգամ անոնց երեւցայ, եւ իմ կողիս վերքերը՝ իրր հաւատք անոր շօշափել տուի: Եւ հիմա ես դէպ ի երկինք ուղեւորած ըլլալով, թող անոնց տգիտութիւնը չգայթակղի քու միսիթարութեանդ յոյսէն վրիպելով: Ուստի, փութա՛ միսիթարելու իմ որդեակներս ու աշակերտներս: Գնա՛, հանգչէ անոնց մէջ ինչպէս ես իրենց խոստացայ, ու յիշեցուր անոնց սովորեցնելով ինչ որ ես իրենց ըսած էի:

(Շարունակելի)

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Վըսեմ խորհուրդ... բայց հողածինս ապիկար
Ի գուր սրբնիմ ըլլալ անոր խելամուտ.
Հայրն անեղ, նոյն Լոյսն եւ Սէր... հիւսկէն մութ
Ի՞նչպէս երեակ եւ մի են միշտ հաւասար:

Մինչ ալեծուփ մըսածումով ես ընդ վայր
Ջանամ լուծել խորհուրդն այս հիւսմանչ
Յանկա՛րծ յերկնից ցոլայ լուսոյ վառ ճանանչ
Եւ Յովհաննու Սուրայ արծիւն հեզավար:

Սուր սեւեռած նա իւր աչքեր յերկն խոր
Մինչ անբքիթ դիտէր արփին լուսաւոր...
Շընորհ յանկարծ, լոյս մը ծագէ իմ մըսաց

Մի եւ երեակ տեսնեմ յոյս, ջերմ, արեգակ.
Եւ գոհ, խոնարհ դաւանիմ նոյն օրինակ
Միշտ անբաժան երեք Անձինք, մի Աստուած:

ԳՈՂԹՆՈՒՆԻ

ՏՕԳԹԷՕՌ ՔՐՈՒ-ԹՈՆՆԻՆԿ

ՀՌԶԱԿԱՒՈՐ ՆՈՐՎԷԿԻԱՅԻՒՄԸ ԴԱՐՁԸ

(Շարունակութիւն եւ վերջ)

Վերս յառաջ բերուած կտորը իւր դարձէն քանի մը տարի առաջ
կը գրէր Քրոու-Թոննիկն երկասիրութեան մը մէջ որ զերմաներէնի և
գաղղիերէնի ալ թարգմանուեցաւ և զոր կոչած էր «ժամանակակից Բո-
ղոքականութիւնը»։ Տակաւ առ տակաւ համոզում գոյացուց Քրոու-
Թոննիկն թէ Բողոքականութեան յառաջ բերած բաժանումը՝ քրիստոնէ-
ութիւնը հարուածող աղէտներուն մեծամեծներէն մէկը եղած է։ Ինչ որ
անհունօրէն սատարեց պայծառ գաղափար մը տալու իրեն՝ բողոքակա-
նութեան ու բողոքական նորոգիչներուն նկարագրին վրայ, Լուտերի
անձնական գրութիւններուն խորապէս ուսումնասիրութիւնն եղաւ։ Հոն,
Տր. Քրոու-Թոննիկն յիշաւի գտնուեցաւ ճշմարիտ պատմական Լուտերին
առջեւ, և ոչ այլեւս այն Լուտերին առջեւ, պճնուած, զարգարուած

ինչպէս առհասարակ նախամեծար կը համարին նկարել Վիդէմպէրկի ազանդապետին ժողովրդային բողոքական գովաբանները :

«Ես ուսումնասիրեցի Լուտերի գրութիւնները իբրեւ վաւերական աղբիւրներ նորադանդութեան պատմութեանը : Կը գրէ Տր. Բրոխ-Թոն-նինկ իւր յիշատակաց մէջ, և հոն շատ մը բաներ գտայ այնպէս, որ իմ նողկանքս գրգռեցին : Գլխաւորաբար իւր բարոյական սկզբունքներն եղան որ իմ հակակրանքս զայրացուցին : Ամուսնական կեանքի վրայ գրած իր քարոզը յոռեգոյն եւս էր՝ որչափ ես չէի կարծած . անոր վրայ ցատումս աւելցաւ : Ես, իրաւ է, վարժուած էի, երբ խնդիրը Լուտերի վրայ էր, այն կանոնին հետեւելու՝ թէ պէտք է ամէն բան կարելի եղածին չափ մեղմօրէն մեկնել, մինչդեռ անոր հակառակորդներուն հանդէպ կ'ուզուէր անաչառ և արտաքոյ կարգի խստապահանջ ըլլալ : Կը խորհէի թէ պէտք է մինչեւ վերջը ամբասիր ընել զԼուտեր : Բայց այս արտաուայ քարոզին գովաբանած բարոյական սկզբունքներուն համար չքմեղանք մը, արդարացուցում մը գտնել, ահա ինչ որ բացարձակապէս անհնարին եղաւ ինծի, հակառակ անսահման բարեացակամութեանս : Եւ յիշեալ կանոնը, — ամէն ինչ ի բարին մեկնելու, — չէր կրնար անշուշտ պարտականութիւն մը դնել ճերմակ ընելու ինչ որ սե էր... Լուտերի հաճոյ ըլլալու համար, — և բարի կոչել ինչ որ չար էր, Հետեւաբար խնդրոյ առարկայ եղող այդ գրութիւնը ինծի համար կերպով մը Շիպպոյէք եղաւ, որ ինծի իբրեւ փորձաքար ծառայեց հաւաստելու համար թէ արդեօք մարդիկ կարող էին ունենալու Լուտերի վրայօք պատմական առաւելայական գաղափար մը : Ստէպ այս եղանակաւ փորձի ենթարկելու տատամսեցայ այնպիսի անձնաւորութիւններ, որոնց բարեմտութեան վրայ ստարակուսիլը ինծի շատ դժուար կու գար : Քանզի եթէ, այս քարոզը կարգալէ վերջն ալ, չարունակէին անոնք պաշտպան կանգնելու Լուտերի բարոյականին, ստիպուած պիտի ըլլայի համարելու զանոնք Լուտերի այնքան կայր երկրպագուներ, որ այլեւս կարելի չէր պատմական ճշմարտութիւնը յարգել տալու ու է ճիշդ ընել :»

Տր. Բրոխ-Թոննինկ կը պատմէ թէ իր աշխատութեան սենեակին մէջ Լուտերի մէկ պատկերը դրած էր : Բայց խորապէս ուսումնասիրելէ վերջը այն դիրքը զոր Լուտեր բռնած էր՝ Հէսի Լանտկրաւ Փիլիպպոսի երկակնութեան վրայ, վար առաւ պատէն այս նկարը : Բայց հակառակ այս ամենուն, դեռ որոշած չէր նա թողլու այն Եկեղեցին զոր Լուտեր հաստատած էր, ինչպէս որ դեւ իրեն համար պարտք մը չէր զգար մրտնդութիւն կաթողիկէ Եկեղեցւոյն մէջ : Եւ որպիսի՝ ահաւոր դժուարութիւններ չէր ներկայացներ այնօրինակ որոշողութիւն մը, մարդու մը համար որ կը գտնուէր Տր. Բրոխ-Թոննինկի դիրքին մէջ :

Նա համարուած ու մեծարուած էր իրր նշանաւոր մի տառուածաբան Լուտերականութեան : «Կրցած պիտի ըլլար անշուշտ կախկոպութեամբ

կան զարդերն զգենուլ, եթէ մնացած ըլլար Նորվեկիոյ Կառավարական Եկեղեցւոյն մէջ» : Կը գրէր Նորվեկիոյ ծանօթ բողոքական հովիւ մը : Եւ այնպիսի փափոցի զգայութեամբ օժտուած, բարեկամութեան համար այնքան սիրազեղ և այնքան եռանդուն սիրտ ունեցող մէկու մը համար, ինչպէս էր Տր. Բրոխ-Թոննինկ, անպատում ցաւ մը պէտք էր ըլլար խորտակել այնչափ բազմաթիւ երկրաւոր սիրելի կապեր, փշրել երեսուններեք տարուոյ ասպարէզ մը ի ծառայութիւն Կառավարական Եկեղեցւոյ :

Եւ խնդիրը միայն իր անձին համար չէր. կար նաև իր ընտանիքը : Եթէ լքանէր իր պաշտօնը, ինքը, իր կինը և իր մատղաշ զաւակները պիտի մնային առանց հացի :

Բայց շատ տարիներ ուսումնասիրելէն, երկար ներքին պայքարներ մղելէն և անդադար աղօթելէն վերջը, վերջնական որոշումը տուաւ զնոսկան քայլն առնելու, և 1899ին հրաժարական զրկեց Նորվեկիոյ Կառավարական Լուսերական Եկեղեցիի մէջ իր ունեցած պաշտօններէն : Բայց դեռ որոշած չէր Կաթողիկէ ըլլալ : Սակայն քիչ մը հանդարտութիւն ձեռք բերելու համար մեկնեցաւ յԱրհուս ի Տանիմարքա, և հոն Յիսուսեանց Ուսումնասիրանին մէջ օթեւանեցաւ :

«Ես հոս քաջուեցայ, մենարանի խաղաղութեան մէջ, կը գրէր Բրոխ-Թոննինկ իր բարեկամներէն մէկուն : Կը զգամ ինքզինքս իբր նուազ մը որ մրկալից և վտանգալից ճամբորդութենէ մը ետքը կը վերադառնայ ժայռերու և սարերու : Եւ եթէ դեռ նաւահանգիստ հասած չեմ, սակայն կը զգամ թէ հովերէն պատասպարուած եմ, հայրենիքի ափերուն մօտ :

Տր. Բրոխ-Թոննինկ ապրեցաւ հոն ժամանակ մը, անձնատուր ըլլալով ուսմունքի և աղօթքի : Մայիս ամիսն էր, Մայիս ամիսն որ նուիրուած էր Ծովու Աստիին : Եւ օր մը երբ իր բարեկամն՝ Հ. Լոթման եկաւ զինքը տեսնելու, Բրոխ-Թոննինկ անոր ձեռքը սեղմեց և ըսաւ. «Ա՛լ ասկէ աւելի չեմ կրնար սպասել. պէճ է որ Կաթողիկէ ըլլամ՝ ճամբորտ խորհուրդներու հազորդակից ըլլալ կարենալու համար» :

Յունիսի 13ին Տր. Բրոխ-Թոննինկ Կաթողիկէ հաւատոյ դաւանութիւն ըրաւ Յիսուսեանց եկեղեցւոյն մէջ :

Եկեղեցւոյ ծոցն ընդունուելէ վերջը, իր ոյժերը նուիրեց Կաթողիկէ դատին : Իւր տաղանդաւոր գրիչը Սկանաինալիոյ Կաթողիկէից բնծայեց բազմաթիւ երկասիրութիւններ, ի մէջ այլոց «Կրօնական տարի» կիրակնօրեայ քարոզներու ժողովածոյ մը, — նորադարձի մը յիշատակները, Սրբունի Պրիկիդա Շուէսցի, եւլն :

Եւ իւր խորին բարեպաշտութեամբ, իր ազնիւ և հրապուրիչ անհատականութեամբ կրցու ազդեցութիւն գործել այն կարողութեամբ որ ամէն ճարտարախօս հնարքներէ գեր ի վերոյ է, — բարի օրինակի զօրու-

թիւնը: Այնպէս որ, կիրակի օր մը, պատարագ տեւանելու գացած պահուն, երբ իր երկրաւոր ընթացքը կատարեց և շուեց երկինք, տեսնուեցաւ թէ որչափ սիրուած էր իր հայրենիքին մէջ, ամէն կողմանէ հեղեղօրէն վազեցին համակրական ցոյցեր: Ամենազգի բողոքական թերթեր մեծ դրվասանքներով խօսեցան անոր վրայ:

Իրոխ-Թոննիսկի անձին մէջ Սկանտինաւեան երկիրները կորսնցուցին իրենց ամենազինւ և ամենամեծ զաւակներէն մին: Բայց անոր յիշատակը անջնջելի պիտի մնայ, և ուրիշներ ալ պիտի յորդորէ մտնելու այն ճամբուն մէջ յորում նա յառաջեց զիրենք, ճշմարտութեան ճամբան, ճանապարհ դարձի ի ծոց մայրենի Կաթողիկէ Ս. Եկեղեցւոյ:

ՀԵՐՔՈՒՄ

Անկերիոյ Վարչական Ժողովէն վաւերական կնիքով կ'ընդունինք հետեւեալը.

«Մէծմուսը Ախպար» կաղէթասընը 1812 Ապրիլ 25/8 Մայիս 4976 նուաճեալու նուախեանտէ «Րօմատա կախկոպոսուզա» թային գրլընան Գրիգոր Գերապայծառ Պահապանեան էֆէնտինին էնգարէյէ շէրաթի գապուլի հագգընտա» սերլէվհալը դարիպ իւլ մէալ պիր մէգալէի մախսուսէ միւսատրօր նաղարը սորգգաթրմըզ օլուպ' մէգալէի մէգալէի պաշտան պաշա կաղնըզ վէ հագգէթի հալէ քիւլլիւհէն մուղայիր վէ մուսաննա իֆատաթ վէ մէսրուտաթը հալի պուլընմասըլա, կերէք հագգէթին թէգաիւրիւ վէ կերէք սատէտիլանըն իղֆալտէն վիգալէսի էմէլիլէ, անըն ալէնէն վէ բէսմէն թէքգիւպինէ միւսարաաթ օլընրը:

Սահիպի մէգալէ տէյօր քի, պիր միւստէթաէն պէրու միլլի իտարէ մէճլիսի վէ քէնտի ճէմիյէթլէթի միլանընտա իիթիլաֆ վար իտի, էվէլ պէ էվվիլ շուրասընը տէմէյէ թա'ճիլ էտէլիմ քի, մուսաիլէյին, քէնտիյի, միւստի մէսուլը թէսմիյէ իթտիկի, էնգարէ էրմէնի Գաթօլիք թէրազգըրէրվէր վէ իթթիհատը սւնսուր ճէմիյէթիին վիճուտը Մէճլիսիմիգ-ճէ քիւլլիյէն մէվհուսմ վէ մէճհուսլ օլմագուտան պաշգա հիչ պիր շէյի հալիգ տէյիլ տիր, Պինաէնալէյի, ճէմիյէթ իլէ միլլէթ արասընտա իիթիլաֆ վար իտի քէլիմէլէրինի բէտա էտէլիգ, Սանիէն, էնգարէ կախկոպոսը Պահապանեան Գրիգոր Գերապայծառըն շէրիմիգէ վիւրուտը միւսաաիպէթիլէ պիր զէմինի իթիլաֆ պուլմագ իւզրէ, Մէճլիսի միլլի թարաֆընտան կէօյա ճէմիյէթի մէգալէիւրէ աղալարը տախի ճէլպ իտիլմիշ տիր տէնիլիյօր, իշպու, ֆըզրա տախի քիւլլիյէն մուղայիրի հագգէթ վէ պիւսպիւթիւն պիսալ ու էսսա մէսրուտաթտան իպարէթ տիր, զիրա միլլի

խտարէ մէջլիսիմիդին սարֆ իթտիյի սէօզ, տէյիլ պիր ճէմիյէթէ իլլա պիր ումուժ էֆրատը միլլէթէ մուխաթապ օլուպ պունտա մուժաիլէյի Գերապայծառն եէվմի վիւրուտինի թէպչիր իլէ պէրապէր, անը փարլապ սուրէթտէ իսթիգալ վէ գապուլ էթմէք իչիւն պիլուժում էհալիյի տալէթ վէ թէշվիգաէն իպարէթ պուլընմը տրը: Իշթէ հալը հաղըգէթ պունտան իպարէթ տիր: Պինաէնուլէյի, սահիպի մէգալէնին, պիր գէմինի իթիլաֆ մագամընտա թա'ատատ էյլէտիկի պէշ հօգթալար պիւսպիւթիւն հագիգէթէ մուգաեիր վէ պիլթիւլիյէ պիտալ ու էստա օլտըղը հասէպիլէ, իֆաաաթը վագըալը սուրէթը գաթիյէ վէ լէսմիյէտէ թէքլիպ իլէ պէրապէր, պէյան իտէրիլ քի, էնգարէ էրմէնի Գաթօլիք Մէճլիսի իտարէսի, նէ' թէրզեան բօլիթիգաաընը թէաղըպ իթտիրմէյէճէկիլնէ, նէ' Գերապայծառը նախագո' վէ եա լէիս տրֆաթըյա մէճլիսէրտէ պուլընտրը մայաճաղընա, նէ' մուժաիլէյի միլլէթին մուժալէի ճիսմանիյէսինէ էլ սիւրաիւրմէյէճէկիլնէ, վէ նիհայէթ նէ' տէ Մէրիսսալըպ ֆէյմանընը իսթիսալի իչիւն երեսիոխանական տէնիլէն ժողովըն լէյինի ալմագսըլըն հիշ պիր թէշէպպիւստէ պուլընմայաճաղընա տաիր նէ' պիր իֆատաթ վէ մէսրուտաթտա պուլընմը վէ նէ' տէ պէօլէ զարիպ վէ եէքտիկէրինի միւթէնագրա թէտհիւտաթ գապուլ էյլէմիշ տիր: Պինապէրին մէճլիսիմիզէ աթֆ իտիլէն իշպու իֆթիրա վէ խնտաաթը քեամիլէն լէտտ ու ճէր վէ պիլ միլլէթճէ վէ մէճլիսճէ Գերապայծառըմըղըն թէմիմիզէ փիւգօպուս թաեին ու թագաիս գըլընտըղը կիւնտէն պա թանրիրաթը լէսմիյէ մուժաիլէյի արգ էյլէտիկիմիզ վէճ' իւզրէ, քէնաիլէրինի մէմուռնէն վէ մա էլ չիւքան գապուլ պիրլէ, հէրան վէ էզհէրճիկէթ օնա մէրպուլ վէ միւթի վէ հիշ պիր վէճ' իլէ մուժաիլէյի լէյինտէն ինֆիրաք էթմէյէճէկիմիզի պէյան վէ էկէր պունա իռչնուտ օլմայան պիր եա իքի քիշլ վար իսէ, անլարըն տա ալըաղը շաթսիյէյէ իթթիպաէն հարաքէթ էյլէտիքլէրինի լւանտա տալա թէրէտտիւտ էթմէյիզ:

Մուլիլէյի Գերապայծառա աթֆ իտիլէն սէօզլէրէ կէլինտիքտէ, պունլար տաիսի մինքիւլի իւլ վիւճուհ հագիգէթէ մուգալիր, վէ թէմամէն պիտալ ու էստա տըրլար, գիրա մուժաիլէյի թարաֆընտան պէյանա մէ' զուլըլ քի, նէպտի սէմուհիլէրինէ, տէնիլէն ճէմիյէթ թարաֆընտան նէ' պիր հէյյէթի մէպուսէ կէլմիշ, վէ նէ' տէ զիարէթճիլէր մէյանընտա, պունա տաիր սէօզ սէպգ իթմիշ տիր, պինաէն ալէյի սէրտ օլընան սէօզլէրին քեաթֆէսի տէ, սահիպի մէգալէնին իլմի թաանիաթտա զայէթ մահիր պուլընան զուլվէի միւթէիտաիլէսինտէ վիւճուտ պուլմուշ շէյլէր օլուպ պունլարտան նէ' միլլէթիմիզ վէ նէ' տէ սէմա'էթլու Գերապայծառըմըլ հիշ պիր վէճ' իլէ խապէրտար տէյիլ, վէ պունա տաիր տէ հիշ պիր քէլիմէ սարֆ իտիլմէմիշ տիր: Իշթէ էվվէլ վէ ախր վէրէճէյիմիզ գաթի վէ սան ճէվաղըմիզ սունտան իպարէթ տիր:

Թաահիի քէյիլէթ զըմիւրնտա, իշպու թէքլիպնամէնին ճէրիտէի

Ֆէրիտէնիզ սիւթուելարընտա տէրճ ու նէշրի: Էնգարէ էրմէնի Գաթօլիք
միլլի իտարէ մէճլիսի նամընա իսթիրնամ օլլընրի էֆէնտիմ:

Մէճլիսի իտարէ նամընա
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՍԱԲԵՍՆ
ՊՕՂՈՍ Օ. ԱՃԷՄԵԱՆ

Էնգարէ 18/5 Մայիս 1912

ԱՐԶԻ ՆԱԶԷԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԵՐ

Մարգուանէն կ'ընդունին հետեւեալը

Խմբագիր Տէր

Ազգօգուտ թերթիդ տեղուոյս բազմաթիւ բաժանորդներն ու ըստ
ժողովուրդը անցկանօք կ'սպասէր իր Սիրելի Հովուին Արհ. Նազլեան
Յովհաննէս Եպիսկոպոսին երկիցս տեղեկագրեալ մուտքն ու պարագա-
ները կարդալու հաճոյքն ունենալ պատ. թերթիդ վրոյ. բայց ի գո՛ւր...
Հասկցուեցաւ որ ժամանակիս ազատութեան շնորհիւ բարիներու թըղ-
թակցութիւնն ալ դատապարտուած է անորոշ ձեռքերու մատնուելու
և արժանաւոր հովիւներու արժանիքն կապտուելու, և արդէն՝ կամաց
կամաց քրիստոնէութեան ծնունդի դարերը յիշել կ'սկսինք: Ինչ որ է,
թէպէտ անագան, սակայն ի միտթարութիւն հովուասէր ժողովրդեան
ճաճէիք մեր աշխատեալ միջոցաւ զրկել ջանացած տեղեկութիւնները
զգուշութեամբ հրատարակել:

Հապիւ մեր Սիրելի Հովուին գալու լուրերը լսուեցան, Տրապիզոնի
միջանի հակակղերներու մրտաւ զազրելի նախատական թղթեր խոռվա-
րարի մը միջոցաւ սկսան քաղքիս մէջ երևիլ, իրենց սինլքոր ու գայ-
թազդելի արարքին զուրիշներն ալ պղտկելու նպատակաւ՝ ինչ որ չա-
տոնց կը ջանան ընել: Այդ բանը սակայն բարի եպիսկոպոսին բարեմաս-
նութեանց հալածեալի նահատակի տիպոսն կը յաւելուր ու ժողովրդեան
սրտին ըղձանք իր՝ եպիսկոպոսին հանդէպ մորմոքի կը փոխուէր ու ժամ
սուաջ տեսնելու արտակարգ միջոցներու կը դիմուէր: Այնպէս որ Անոր
Հաւրա հասնիլը հազիւ կը լսուէր պատուիրակութեան և հրաւիրանաց
հեռադիրներ մէկմէկու յաջորդեցին և 7 էր Ապրիլի քահանայից, Յիսուս-
եան Հորց, դասատուաց, Աւագանուոյ, գործաւորաց և ամեն դասա-
կարգի 15 կառքերու ու 12 ձիաւորաց վսեմ թափօրը չէլթէք կ'ողջու-
նէր կ'ողջագուրէր հուռղեաներու մէջ իր անվներ ու հալածեալ Հովիւը:

և իրեն համար պատրաստուած լանտոյի մը մէջ նստած սրբութեամբ և իմաստութեամբ հիւծեալ այդ դէմք մաքնիսի պէս առջեւէն կը քաշէր չեծելոց ու կառայ կարգաւոր խումբը դէպ ի քաղաք: Քաղքիս կեդրոնը մեր եկեղեցին տանող երկայն լայն պողոտային վրայ աստի և անտի ոտքի կեցած գլուխ գլխի վրայ աշագին բաղմութիւն մը յարգանօք ողջոյնեալին ողջոյնները կ'ընդունէր մինչ դանդաղ մը լանտոն կը յառաջանար դէպ ի եկեղեցին: Հեռուանց եկեղեցւոյ դրան առջեւէն Յիսուսեան հարց համերդի հրճուանաց դռնյանքները կ'որոտային կ'անդրադառնային ալեւ-ժաման բաղմութեան ժխորին հետ, մինչև որ ժողովրդեան հոգին դարձող այդ դէմքը՝ եկեղեցւոյ առջև կանգ առնելով տեսնուեցաւ բաղմութեան, ուր ահագնադորդ ծափահարութիւն մը բրթաւ ամէն կողմէ զոր ընդմիջեց եռեսունի չափ երգեցիկ խումբին հոգեզմայլ հրաշափառը ընդ դասապետութեամբ Յարութիւն Քէչեան դասատուին ու երկու քաջ դպրապետներու Պ. Մկրտիչ Բէնիքեան և Պ. Մանուէլ Խորոզակեանի:

Այդ բաւական ընդարձակ եկեղեցւոյ անբովանդակելի խոնուած բաղմութեան շունչն ու հեւքը վայրկենապէս բռնուած ամենուն աչքն ու մտադրութիւնը դարձած էր հայրապետական զգեստուք յամրաքայլ բեմ ելլող Առաքեալին որ ի Հռովմայ Գահիցն վերապատուենալ կուգար Յիսուսի Քրիստոսի փոխանորդին օրհնութիւնները շնորհելու իր ստացած հօտին լիօսեցաւ խաչի վրայ, երկար խօսեցաւ, վայրկեան մը չերեւցաւ, յուզումն ու սէրը ծայր աստիճան էր քահանայից ու ժողովրդեան, համապատասխանուեցաւ շնորհակալութեան հլութեան ու մաղթանաց ճառերով Յիսուսեան Հարց Մեծաւորին Բեռ տը Քօնթանտէի և տեղւոյ ժողովրդապետին ժիջոցաւ: Հօր որդւո՞վ բերկեալ այս տեսարանը կը պսակուէր սոյն երգիչ խումբին «ուրախ լեր» չարականի զմայլելի երգեցողութեամբ մինչ Արհի. վիճակաւորն կ'առաջնորդուէր նորաչէն առաջնորդարանը, ուր ընդունուեցաւ իր ժողովրդեան կրկին յարգանքները, ու այցելողներ, յորս էին էջմիածնական Հայոց Առաջնորդ Հայրը Իպրանտեան Գէորգ Վ. իրենց դպրոցի տեսուչն և դասատուաց խումբը: Բողոքական քոլլէճի բրոֆէսէօրներ ու լրագրապետներ (4 լրագրատուն կան քաղքիս մէջ) և այլ քաղքիս պատուաւոր անձինքն, և զամենքը թողուց քաղցր ապաւորութեան տակ ու նոյն հետայն սկսան ձեռքէ ձեռք պրուել թռուցիկներ ի վեր հանող մեր սիրելի Հովուին շնաչխարհիկ բարեմասնութիւնները, ի հարկէ որչա՞փ տարբեր մի քանի օրեր առաջ երեւան եկած մրտաւել զբ-պարտանքէն:

Երկրորդ օրը նոյնչափ խուանեալ բաղմութեան առջև կը խօսէր Նորին Արհիապատուութիւնը եկեղեցւոյ իշխանութեան վրայ, կը հաղորդուէին 150 աւելի հոգիներու կուտար Քահանայապետական լիակատար ներողութիւնը, և Ամեն. Գերբըջ. Հոգեւոր Տիրոջ սիրալիր ողջոյնները: Ամեն հաջարակութեանց զիմումներու հաճեցաւ գոհացում տալ երեքօր-

եայ բանախօսութեամբ որ խեղճութեամբ ծափահարութեանց մէջ և տնա-
ճելի միայն այն պատահարն էր որ եկեղեցւոյ բակն ալ լեցուելէն վերջ
ունկնդիրներէ շատեր տեղ չգտնելով զուրկ մնացած էին անոր հոգեզ-
մայլ քարոզութիւններէն ու մերձակայ բանախօսութեանց դարձեալ խոս-
տուով մխիթարուած են : Յայտմ իր գտնուած օրերը լեցուն եղաւ վե-
րահաստատեց տեղւոյս աղքատախնամ եղբայրութիւնը հաստատուն հի-
մերու և եկամտից կապելով զայն : Հաստատեց նաեւ Ս . Հալորդու-
թեան պաշտամունքի և աղքատ եկեղեցւոյ տիկնանց միութիւն մը : Վեր-
ջապէս Առաքելութիւնս իր հաստատութեան օրերէն ցայտմ այսպիսի ո-
գեւորութիւն մը ունեցած չէր կ'ըսեն հիւսիսը :

Հսեցինք մեր Արհ . և սիրելի Հովութիւն Սամսոն եւս ունեցած սի-
րազեղ ընդունելութիւնը ու գործունէութիւնը : Հոսկէ անցաւ Ապրիլ 26
յԱմասիա իովուական առաջին այցելութեան , հոն ալ իր ընդունելու-
թիւնը դրդելի և սիրալիլ եղած է , և տեղւոյս ժողովուրդը օգտուած
անոր բացակայութենէն դիզելու իր անհուն շնորհակալութիւնները առ
Գերերջ . Հոգեւոր Տէրն զոր խնդրեմ հրատարակէիք Պատ . թերթիդ մէջ ,
հատ մնալ առ Սրբազան Քահանայապետն : Այժմ մեր հասարակութիւնը
գոհ ու երջանիկ է զայն իր մէջ վայելուն , և երկար վայելուն համար
երախտադարտ կը ճանչնայ ինքզինքը լուստերնին շիջող Տրապիզոնի մի
քանի նկատմաններուն : Մտոյգ է չարիքի վրայ ծիծաղողներէն չենք ,
սակայն չենք կրնար կամաւոր տգէտներու փեսէն չօգտուիլ , և յիրուի
Մարգուանու Առաքելութիւնը արժանի էր արդէն այսպիսի շնորհաց մը
քանի որ անձանց թուովը կը հաւասարի Տրապիզոնի հասարակութեան և
թէ իր հաւատարմութեամբ Տրապիզոնի դրդումներէն չազդուելով ցոյց
տուաւ թէ ճշմարիտ Կաթողիկոսներ անկէ՞ քաղմաթիւ են հոս :

ԹՂԱԿՄՑ ՄԸ

Մարգուան 9 Մայիս 912


ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՎՍ

Իշխան Պարպերենի պալատը գեղարուեստներով , թանգարաններով զարգարուած և
համանուն մեծ հրապարակի վրայ գեղեցիկ պարտէզով մը կը բացուի Հնադարեան պալա-
տը , որ նոյն ընտանիքէն մեծամեծ քահանայութեան և կարգինայներ տուած է նկե-
ղեցւոյ , իր ծոցին մէջ նախնականգիր կը պահպանէ մի չքնաղ մատուռ , ամենամեծ ար-
ուեստագէտներու գլուխ գործոց մը , որուն մէջ իշխաններն , խիստ աւանդապաշ երեւելի

գերդաստանին բարեպաշտական սովորութեանց, ամէն տարի մի քանի անգամ հանդիսաւոր տօնախմբութիւններ կատարել կուտան, յորոց մին տեղի ունեցաւ անցեալ օր, մարդուն քաղի խորհրդայ Ս. Ասատուածին պատկերին տաջեւ, լուսափառ և դարնանային ծաղիկներով յաւրումնաւէտ: Ներկայ կը գտնուէր Հոգովական պատրիկութիւնն և ազնականութիւնը: Հանդէսները փոխն ի փոխ կատարեցին Կարգ. Նէլայի և Վանութեյի: Այն բարի հաւատացեալք, այսպէս անբաժան կը կցեն քաղաքակրթութիւնը, ազնուականութիւնը, գաւազանք և աշխարհային բարիքը: Ա. կրօնքին երկնապարգեւ զգացումներուն հետ. օրինակելի՛ կենցաղ... մեր փաբութեան մէջ:

*. Պրութիւնի հաւատացեալք Սրբազան Սրբազան Քահանայապետին մի մասնաւոր շնորհին արժանացան վերջերս, որ իրենց եկեղեցւոյն ընծայեց Ս. Կուսին արծաթեայ արձան մը. չքեղապէս ոսկեզօծուած. մէկ մէթը ասելի բարձր: Ինքնագիր նամակ մը Քահանայապետին կ'ընկերանար այս գեղեցիկ ընծային:



ՀԱՅ ԿԱթՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ


Ամենապ. և Գերեզ. Հոգեւոր Տէր Կիրակի օրը Ան. Յդ. Կուսանաց Մայր վանքին մատրան մէջ հանդիսութեամբ կատարեց երեք մայրապետաց ուխտագրութեան հանդէսը: Ներկայ էին Արհի. Արքիմարեան և Ռոքոսեան Արքեպիսկոպոսներն: Հոգեւոր Տէր՝ Ս. Պատարագը մատուց և արարողութիւնը կատարեց խուռն բաղմութեան մը առջեւ որ ժողովուած էր մատրան մէջ, և հանդէսին պատշաճաւոր խօսակցութիւն մըն ալ ըրաւ՝ նուիրեալներուն նախընտրած կոչման ազնուութեան և պարտականութիւններուն վրայ: Յետ աւարաման Պատարագի, մեծ արահին մէջ տեղի ունեցաւ Աջահամբոյրի արարողութիւնը:

*. Ամենապ. Տէրը իւր փոխանորդին հետ ի միասին այցելեց Սամութիոյ և Քաղկեադոնի Մայրապետաց վանքերը, և խրախուսեց զիրենք շարունակելու իրենց կրթական ուղիքօգուտ ձեռնարկին մէջ:

*. Անցեալ Ուրբաթ օր Մայրութիոյ Եպ. Արհի. Միքայէլ Գեր. Խաչատուրեան մեկնեցաւ իր թեմը: Ծագնաւ չգացած, Ամեն. Հոգեւոր Տիրոջ հետ մասնաւոր տեսակցութիւն ունեցաւ և հրաժեշտ առաւ իրմէ:

*. Արհի. Ստեփան Եպ. Խարայէնտն ողջամբ հասեր է իւր թեմն ի Խաբու թ, ուր խանդավառ կերպով ընդունուած է իւր սիրելի ժողովուրդէն որ քան երբեք սիրով և հլու յարգանքով կը վերաբերի իւր հովուին հանդէպ:


*. Գեր. Յովսէփ Վ. Ճամճեան Մեծ.— Ժողովրդապետ կարգուած է Թարապիոյ Ս. Անտոն եկեղեցւոյն:



ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Դարձեալ գերեզմանաւանդ.— Քաղաքապետութիւնը կը պնդէ այժմ որ Բանկայի թի գերեզմանատան երկայնքը պողոտային վրայ ի վաղուց շինուած փլփկած խանութները վար առնուին: Իսկ Դարաւի Պատրիարքարանն ալ կը պնդէ որ այդ պահուն հրաման տրուի իրենց նոր շէնքեր կառուցանելու հոն: Առաջինը՝ անընդունելի կը նկատէ այս փոխառաջարկը, վերջինն ալ անիրականանալի կը հռչակէ առաջնոյն պնդումը:

Եփրեմ Խան եւ իր յաջորդը.— Քաջարի հայազգի Եփրեմ Խան՝ որ Պարսիկ ազատական գնդին հրամանատարն էր. ու Սալ-էտ-Տէօվէի բանակին վրայ ջախջախիչ յովորութիւն մը տունելով, յանկարծ թշնամեայ մը գնդակէն պատահաբար զարնուելով մեռած էր, յաջորդ ունեցաւ ուրիշ ոչ նուազ քաջ հայ մը՝ Քեռի:



Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Ալլաանիոյ վիճակը.— Թանի թղթակիցը տիւր կը նկարագրէ վիճակը Ալլաանիոյ մէջ, իբր թէ Միտիթենըն ալ՝ որ գրեթէ ամբողջովին կաթողիկէ են, ու շատ հաշակ հա- նած իրենց քաջութեամբ, միառւմ կը յայտնեն միանալու ապաստանութեան, որ պահանջ կը յարէ, կառավարութեան հոն թափած 50,000 զօրքերը բանի դէմ պիտի չկարենան գալ: Մինչ ասոր հակառակ պաշտօնապէս կը ծանուցուի թէ մէկ քանի հրոսակաւներէ պատ Ալլաանիոյ միւս բնակչութիւնը խաղաղ իր գործերով կ'զբաղի:

*. Ձեքի պէյի դասավարութիւնը.— Այս ցնցող դատը վերջապէս աւարտելով վճիռը արձակուեցաւ, ուստի բարեփոխուած օրէնքին Տրդ յօդուածին համաձայն, Մուսթաֆա Նազրմ եւ Չէրքէս Ահմէտ 15ական տարի թիւակարտութեան դատապարտուեցան՝ իւր բուն եղեռնագործները:

*. 45 օտեկան զինուորացուներու մասին Պատերազմական նախարար Մահմուտ Շէվքէթ փաշա տեսակցութեան մը մէջ կամք յայտնած է Արշարունի Պատրիարքին՝ որ նկատի առնելով սնկէ առաջ գալիք անպատեհութիւնները, ըստ այնմ՝ յերակոյտին ներս կայացնէ եւ կարգադրում մը ընել տալ:

*. Մահմուտ Շէվքէթ փաշա բացարձակապէս յայտարարած է, կ'ըսէ թան որ եթէ իտալացիները Քիոսն ու Միտիթին գրաւեն, ինք առանց միւս նախարարներուն կարծիքը նկատի առնելու, պիտի հրամայէ փակել Տարտանէլը, քանի որ ինքն է ազգային պաշտ- պանութեան պատասխանատուն: Մահմուտ Շէվքէթ փաշա կը կարծէ թէ իտալացիները երբ Միտիթին գրաւեն, այդ կղզին իրենց գործողութեան խարխիւ ընելով յանկարծ Քիս- րոսի ծովածոցը ղինուոր պիտի հանեն եւ Չանաքգալէի թերակղզին պիտի գրաւեն:

*. Խալալցիներուն տրուած պայմանաւոր — Գերման դեսպանատունը թուրքիայէ մեկնելու համար թուրքիական իտալացիներու արուած 15 օր պայմանաւորին երկարա- ձգուելուն մասին ու եւ գիմում չէ կատարած դեռ. Բ. Դրան կը կարծուի սակայն թէ եթէ արուած պայմանաւոր բաւական չի գալ, Բ. Դուռը արամադիր է 15 օր եւս եր- կարողա՞նք արուած պայմանաւորը, որովհետեւ թէ՛ շողենաւ չկայ եւ թէ փաճառա- կաններէն շատեր շուտով չեն կրնար կարգադրել իրենց գործերը. կ'ըսէ Մոնիթօր:

*. Մեծ օգակաւ մը կը դրկուի Տարսանէլի վրայ.— Վիեննայէն յոյն թերթի մը հետեւեալը կը հեռագրեն.— Յայր կը տեղեկանայ թէ իտալացիները մեծ օգակաւ մը պատ- րաստելու վրայ են եւ կը կարծուի որ ասոր միջոցաւ, Չանաք Բալէն ուժեղանան: Հոմէ առնուած տեղեկութիւններ կ'ըսեն թէ Քիոսի պաշարումը կը շարունակուի. սակէ կը հաս- կըցուի որ Ետալական նաւատորմը նոր գործողութեանց պիտի սկսի:

*. Սպառնական ցոյց Միսիլիի առջեւ.— Ապրիլ 15ին Բ. Դուռ հասած պաշտօ- նական հեռագիր մը կը ծանուցանէ թէ իտալական մարտանաւեր սպառնական ցոյց մը կատարած են Միտիթին առջեւ:

*. Արսափին գործերու նախարարութեան պաշտօնաթուղթերու գողութեան խնդ- րին դատաւարութիւնը վերջացաւ եւ գատարանը իր վճիռը արձակեց: Պետրոս Էֆ. Պէր- պէրեան եւ Սարտինքի Էֆէնտի ձայներու մեծամասնութեամբ յանցաւոր ճանցուելով վեց ամսուան բանտարկութեան դատապարտուեցան: Վարչութիւնէն զսղցուած թուղթերու խնդրին գաղով, Սալիտ պէյ եւ Տօքթ. Չալիքի անպարտ արձակուեցան, ինչպէս նաեւ խրմ- բագիր Գուտրի Էֆէնտի Մ. Հաճիպիարի վկայութիւնները սնհիմն նկատուելով, Մ. Հիւր- միւզ ալ միաձայնութեամբ անպարտ արձակուեցաւ:

*. Պարոն Մարալի պատճառ.— Բեզերպուրկէն 25 Մայիս թիւով կը հեռագր- րուի.— Ինչ որ ալ ըլլան Պարոն Մարալի ֆօն Պիպերլիթայնի սննին ներշնչած զգացումները, սակայն եւ այնպէս ա՛ն Անգլիոյ մէջ լաւ ընդունելութեան պիտի արժանանայ: Նկատելով որ, Գերմանիոյ նոր գեսպանը ջանք չպիտի խնայէ Երեւակ Համաձայնութիւնը ակարացնելու եւ կազմադրուեցու, գիմարտութեան աշտմէն միջոցներ ձեռք առնուիլ սկսած են: Անգլիական

Մամուլը Երրեակ համառոտութեան պահպանման և զայն ի հարկին կատարելապէս վճարողական զինակցութեան մը փոխակերպելու կողմն է: Այս ընթացքը Ռուսիոյ մէջ մեծապէս հաւանութիւն պիտի գտնէ, նկատելով որ ամէն ոք տրամադիր է Թրանսայի և անոր բարեփոխներուն հետ ունեցած կապերը աւելի եւս ամրապնդելու:

* Դեսպանախոսութիւնը. — Կը հաւատեն թէ՛ մեծ տերութիւնները կարծիքի փոխակերպման մէջ են հիմա, ծրագիր մը պատրաստելու համար, որպէս զի միջամտեն խաղաղութեան պատերազմը զինազուլով մը կեցնելու և խնդիրը զուամբողջիք դեպքանախորհուրդի մը մէջ լուծելու համար:

* Ծովային նախարար Տարաշևիզ զեպ. — Նախարարաց Խորհուրդին որոշումով, Ծովային նախարար Խաւրշիտ փաշա երէկ «Ծառիկեարը Միլլէթ» թորթիւնաւով Տարաշևիզ զեպ, հան տեղւոյն վրայ քննութիւններ կատարելու և հրահանգներ տալու համար: Այդ առթիւ Խաւրշիտ փաշա Կայս. Պալատ երթալով Սուլթանին ներկայութեան ընդունուեցաւ և իր հրահանգը մատուցց:

Մ Ի Զ Ա Զ Գ Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Տանիմաքցայի թագաւոր Փրեքերիկոս II. որ թագաւհայն հետ զեպցած էր Համպուրի և հոն մեծ պանդոկի մէջ կը բնակէր անժամեթ, զիչեքը յամը 10ին մօտ ըստ սովորութեան պատելու ելած ըլլալով, երբ կը դառնար յոգնած, պանդոկին մօտ ուժասպառ կ'իյնայ. և ներկայք շնանչալով ո'վ ըլլալը, ինքնաշարժ կառքով կը փոխադրեն զինքը հիւանդանոց, ուր հանելուան արգէն փոխնակած էր վեհափառը, մինչդեռ թագաւհին պանդոկին մէջ մտահոգ կը սպասէր անոր վերադարձին: Սրտի հիւանդութեամբ կը տառապէր արգէն եօթնամասունամեայ ձերունին Ազեթարը տեսարան մը պարզուեցաւ երբ փոխնակային ճարձիքը բերին պանդոկին մէջ, ինք որդին էր մեծ և երեւելի Քրիստիան II. թագաւորին: Յունաստանի թագաւորը, Անդրիոյ Ալեքսանդրա և Ռուսիոյ Մարիա Ֆէստատորաթա մայր Կայսրուհիներուն եղբայրն էր, նորմէկիոյ Հաաքոն թագաւորը իր երկրորդ որդին է:

Իր մարմնը մեծ շքեղութեամբ փոխադրուեցաւ ի Դանիա և թագուեցաւ արքայական գամբանին մեջ:

Իրեն կը յաջորդէ գահուն վրայ իւր անդրանիկ որդին՝ Քրիստիան III.


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ներքողեան II. Ներսէսի Լամբրոնացւոյ	257
Հնչեակի ի փառս Ա. Սրբազուքեան	262
Քոթիս Թոմնիկ	262
Հերիւմ	265
Արհ. Նազլեան Սպիսկոպոս	267
Տեղեկագրական	269

ԱՐՏՈՆԱՏԻՐ
ՅՈՒՆ. Մ. Վ. ԿԵՏԻԿ



ՏԵՐՈՐԵՆ-ԽՄԱՍՅՐԱՊԵՏ
ՖԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ» . Հայ Կաթողիկէ Ի Պատրիարքարան
պատշոնական Շաբաթաբերք, փոխադրուած է ի 4. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ
նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյոց ամէն յուրերն՝ համառոտ-
ուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
մանուանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պոլիսի համար	
Տարեկան	Դնել : արծ. 40
Վեցամսեայ	» » 20
Արտասահման	
Տարեկան	Ֆրանկ 10
Վեցամսեայ	» 5
Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանա-Բոստոյ եւ կամ մէյ մէկ դր. 6000 նամակադրութեամբ :	

Մէկ թիւ 1 Դահեկան

—*—

Նամակ . յօդուած եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.
ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ
«Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա 4. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcat Catholique
Pera Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնն պարտաւորեալ չէ անպատշաճ կամ նոյնութեամբ
հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիլ:
4.— Տօղուածներու ձեռագիրները պէտք է գրուած քլլան թուղթին մէկ
կողմը վիայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: